ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ԵՍԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Եսայան,

ի պատասխան Ձեր 19.12.2023թ. հ.067 գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ վարչական դատարանի 25.08.2020 թվականի որոշմամբ, թիվ ՎԴ/4743/05/20 համարով վարույթ է ընդունվել Էդգար Չիլինգարյանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան քաղաքի Աճառյան և Մարշալ Բաբաջանյան փողոցների խաչմերուկում գտնվող էլեկտրասյունը ենթևեկելի մասից չտեղափոխելու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 01.02.2021 թվականի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության: ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/4743/05/20 վարչական գործով 04.05.2021 թվականին կայացված վճռով Էդգար Չիլինգարյանի հայցը բավարարվել է և վճռվել է.

- Ոչ իրավաչափ ճանաչել Երևան քաղաքի Աճառյան և Մարշալ Բաբաջանյան փողոցների խաչմերուկում գտնվող սյունը երթևեկելի մասից չտեղափոխելու Երևանի քաղաքապետարանի անգործությունը,

- Երևան համայնքից հօգուտ Էդգար Չիլինգարյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

Վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.12.2022 թվականի որոշմամբ մերժվել է: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.12.2022 թվականի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի ընդունումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մերժվել է:

Միաժամանակ տեղեկացվում է, որ թիվ ՎԴ/4743/05/20 վարչական գործով կայացված դատական ակտի բովանդակությանը կարող եք ծանոթանալ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքից (www.datalex.am):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ